

ՊԱՏՄԱԿԱՆ

«ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ» ԺԲ. ԴԱՐՈՒՄ
ԵՒ ՆՐԱ ԱԿԱՆԱՀՈՐ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ
ՀԱՅՈՑ ՆԵՐՄԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ

Գրեց՝
ԷՐՆԱՏ ՍՈՒԻՏՏՆԵՐ*

ԺԲ. դարում Մերձաւոր Արեւելքում տեղի էր ունենում մի նոր կարգաւորում: Բիզանդական կայսրութիւնը վերածնունդ էր ապրում Կոմենցերի իշխանութեան տակ: Երեք ականաւոր կայսրեր, որոնք միասնաբար իշխեցին ամբողջ մի հարիւրամբակի ընթացքում (1081-1180), չվարանցին նոր եւ մասնաւորապէս Արեւմուտքից եկող մշակութային հոսանքներն ընդունելու, եւ կայսրութեանը վերստին ապահովելու մեծ պետութեան դիրք (1): Միցիլիայում եւ հարաւային Խոալիայում արդէն ԺԱ. դարում հաստատուել էին Նորմանները. նրանք ճգում էին իշխանութիւնը ընդարձակել դէպի Միջերկրականի արեւելեան ափերը: Հակառակ այն իրողութեան, որ Կոմենց կայսրերը կարողացան վարպետորէն կանչել Նորմաններից սպառնացող վտանգը, սակայն չկարողացան արգելք լինել բիզանդական կայսրութեան հնամենի սահմաններից ներս լատինական իշխանութիւնների ստեղծմանը, երբ դէպի արեւելք սկիզբ առին խաչակրաց արշաւանքները: Անատոլիայում, կայսրութեան երրեմնի նահանգները գտնում էին իկոնիոյ սելջուկ սուլթանութեան իշխանութեան տակ: Ինչպէս Նորմանները, նոյնպէս եւ Թուրքերը ցանկանում էին տիրանալ Կոստանդնուպոլսոյ բագին: ԺԱ. դարի ընթացքում հայերն կորցրել էին իրենց բաղական անկախութիւնը: Նրանց բուն երկիրը ժԲ. դարում ընկել էր բրժական տիրապետութեան տակ: Հայերն ու Հայ

նկեղեցին Կոստանդնուպոլսոյ օրբոտոն կայսրերից նուազ չտառապեցին, քան հետագայում նրանց հետեւող խալած քուրքերից: Երբ Կոմենցներն Բիզանդիան առաջնորդում են ծաղկման մի նոր հանգրուանի, հայերն էլ իրենց հերթին են կարողանում ապրել որոշակի վերազարքունք: Այց՝ տեղի է ունենում ոչ թէ իրենց պապենական հողում, այլ այդտեղից հարաւ-արեւմուտք գտնուող՝ Կիլիկիայում, որտեղ հայկական իշխանական տներին յաջողուում է ստեղծելու սեպհական իշխանութիւն, եւ որի հովանու տակ համախմբւում են ընկեռուած հիւսիս-արեւելքից ժողովրդական լայն հոսանքներ: Այս նորակազմ իշխանութիւնը 1199-ին արդէն այնքան էր զօրացել, որ նրա իշխանաւորը արժանանում է քագաւորական բագի: Այսպէս կոչուած՝ Փոքր Հայոց (Kleinarmenien) քագաւորութիւնը գոյատելելու էր մինչեւ 1375 թուականը: «ԺԲ. դարի ասորական վերածնունդի» ժամանակ, ոչ քաղաքական, այլ պարզապէս մշակութային բնոյրի ծաղկման մի շրջան են ապրում նաև ասորինները, որոնք ոչ միայն սահմանակցում, այլ ստուար քուով ապրում էին հենց Կիլիկիան Հայաստանում:

Մերձաւոր Արեւելքի այդ ծաղկող աշխարհի Քրիստոնեաները պատկանում էին հինգ եկեղեցիների. Բիզանդական Օրբոտոն, Արեւմտեան Լատին, Մարութիւն, Հայ եւ Ասորի: Մեր դաւանագիտութեան մէջ վերջին այս երկու եկեղեցիները կոչում են «միաբնակ», սակայն նրանց

միշեւ եկեղեցական միութիւն գրեթէ չի եղի (2): Այն հարցը, թէ մարդունիտները իրենց ծագումով «միակամիայ» են, չենք հետազոտում: Նրանք ոչ Ասորի եւ ոչ էլ Յոյն եկեղեցու հետ եկեղեցական միութեան մէջ չեն եղիլ: իսկ խաչակրաց արշաւանքից առաջ Լատին եկեղեցու հետ յարաբերութիւն՝ նմանապէս չեն ունեցել:

Այն շրջանակները, որոնք Մերձաւոր Արևելքի այս նոր կարգաւորման նախաձեռնողներն եղան, հետաքրքրում էին նաև յարթահարելու Քրիստոնեաների միշեւ գոյութիւն ունեցող ներքին բաժանումները: Ալեքսիոս Ա. Կայսրը, տակաւին խաչակրաց առաջին արշաւանքից առաջ, հրաւիրել էր Ուրբանոս թ. պապին գալու Կոստանդնուպոլիս եւ մասնակցելու մի ժողովի, որը կը բննի պատարագի հացի խմորուն թէ անխմոր լինելու ծիսական հարցը (3): Ժամանակի զգացողութիւնը, յատկապէս Բիւզանդական աշխարհում պահանջում էր, որ միասնական հաւատքը իր արտայայտութիւնը գտնի ծիսական սովորութիւնների նոյնութեան մէջ: Ռւստի, բաղարջ հացի հարցը դառնում է վիճարանութեան հիմնական կտտերից մէկը, մէկ կողմից՝ յոյների, իսկ միւս կողմից՝ յատինների ու հայերի միշեւ (4): 1141ին Յովիաննէս թ. կայսրը դիմելով Խնովվինտիոս պապին գրում է, որ գոյութիւն ունեն երկու քոյրեր՝ անձնապէս ինքը ցանկանում է առաջնորդել աշխարհականին, մինչդեռ հոգեւորի առաջնորդութիւնը բողնում է պապին, որպէս զի նորից վերահաստատուի Քրիստոնեական եկեղեցու միութիւնը եւ Վերստին հիմնուի հոռմէական կայսրութեան տիրակալութիւնը (5):

Միութեանական սերտ բանակցութիւններն (6) ի վերջոյ սկսում են Մանուկ Ա. կայսեր ժամանակ: Ostrogoroskyn նրան այսպէս է բնութագրում.

«Նա ի սկզբանէ մի զօրավար եւ

բաջամարտիկ մի անձնաւորութիւն էր. անձնական վտանգից երկնչող չէր: Ամէնից շատ նա օժտուած էր մեծ եւ համարակ գաղափարներով: Հնարամիտ մի դիւնագէտ էր եւ բաղակական գործիչ: Խսկական մի բիւզանդացի՝ համակուած տիեզերական կայսրութեան տեսլականով եւ աստուածարանական բանավէների բուռն կրով: Միաժամանակ, նա իր նկարագրով լրիւ արեւմտեան բնոյրի մի ասպետ էր, եւ բիւզանդական պատմութեան մէջ մարմնացնում էր բաջատուիմիկ մի նոր կերպարի: Նրա կերպարում կարելի է Շշմարել այն իրողութիւնը, թէ ինչպիսի խոր ազդեցութիւն էր գործել խաչակիրների հետ շփումը Բիւզանդիոյ վրայ» (7):

Hans-Georg Beckը ընդգծում է Մանուկի ունեցած յատուկ նշանակութիւնը ժամանակի աստուածարանութեան մէջ, սակայն, երբ խօսիք Մանուկի սեպհական գրութիւններին է վերաբերում, նա կատարում է որոշակի սահմանափակումներ.

«Ինչպէս Ալեքսիոս Ա.ը, նոյնապէս եւ Մանուկ Ա.ը . . . մեծ ազդեցութիւն են ունենում դարաշրջանի աստուածարանութեան վրայ: Մանուկի կամեցողութիւնը պատճառ է լինում բուռն բանավէների ստեղծման, որոնց ուժգնութիւնը արծարծուած հարցերի էլութեան հետ միշտ չեն մնում առողջ յարաբերութեան մէջ: Մանուկի աստուածարանական արժեքը շատ աւելի է նուազում, երբ գահի վրայ իրեւ մի աստուածարան գրիշն վերցնում է իր ձեռքը եւ առանց քննադատական ոգու եւ համապատասխան գիտելիքների գործի է մղում» (8):

Beckը գնահատում է սակայն Մանուկի

«ջանքը մահմետականութեան դէմ յարուցուած բանակոուի բունազերծման հարցով: Նա փորձում է Քրիստոնեայ դարձած մահմետականների հրաժարման

բանաձեւը այնքան փոխել, որ ուղղակի կերպով չնպավոր Մուհամետի դաւանած Աստուածը»:

Խաչակիրների յարաբերութիւններն օրբուռն յոյների հետ սկսում են հետզիետէ սրուել, ոչ միայն գոյութիւն ունեցող քաղաքական հակասութիւնների պատճառով, այլ նաև այն բանի համար, որ խաչակիրներն լատինական քաղաքները շուտով վերածում են եպիսկոպոսանիստ առաջնորդութիւնների։ Նրանք յարաբերութիւններ են մշակում նաև արեւելիան միւս եկեղեցիների հետ։ Մարոնիսները միանում են նրանց (9)։ Ասորի եկեղեցու հետ լատինների ունեցած յարաբերութիւններն ընդհանուր առմամբ բարեկամական են (10)։ Հայոց Գրիգոր Գ. կաթողիկոսը (1113-1116), որը հայրապետական Արոռը Ծովից Հռոմելլայ է տևղափոխում, իր մասնակցութիւնն է բերում Լատինների կողմից գումարուած եկեղեցական ժողովներին (11)։

Գրիգորի կրտսեր եղրայր Ներսէւը, եպիսկոպոս 1135ից եւ կաթողիկոսի ամենակարեւոր գործակիցն ու վերջապէս նրա յաջորդը (1166-1173), որը իր ունեցած աստուածաբանական բարձր կրթութեան համար ստացել է «Ծնորհալի» անունը, իր ստեղծագործութիւններում առաջ է բաշում եկեղեցիների միութեան հարցը։ գրութիւններ, որոնք արդարօրեն կարող են դասուել դասական էկումենիկ գրականութեան շարքին (12)։

Ինչպէս նրա կաթողիկոսական Արոռ բարձրանալու առիթով հրապարակած Թուղթ Ընդհանրականն է վկայում, Ներսէւն եկեղեցական բարեփոխումներով հետաքրքրուած ժամանակակիցների միանալու անգամանական այն հոգեւորականն էր, որը հզօրացող Կիլիկիայում, որտեղ արդէն ումանք ընդունուած չափերն էլ գերազանցել են, պաշտպանում էր այն տեսակէտը, թէ

առօրեայ տաղտուկներում պէտք չէ մոռացութեան ենթարկուեն յաւիտենական արժեքները (13)։ Սոյն գաղափարականը լոկ նուիրագործուած երբեմնի արժեքների սրումով նա չէր իրականացնում, այլ փորձում էր վեր հանել դրանց իսկական իմաստը։ Լավի դառնալու համար պէտք չուներ սովորական աւանդութիւններն ըմբկահարելու, այլ նա դրանք օգտագործում էր հիմնաւորելու իր բարենորոգչական ծրագրերը։ Այս առումով, Քննական ոգին նրա մօտ վերածում է ինքնըստիմեկան հասկանալի մի երեւոյթի, եւ նա բաժնում է նոյնիսկ նշմարիտն ու իրական նախ անհրաժեշտ կերպով ասուելիք, իսկ միւս կողմից՝ գուցէ օրինաւոր եւ յանձնարարելի, բայց ոչ պարտադիր խօսի մէ։

1165ին Գրիգոր Գ. Պահաւումի կաթողիկոսի հրամանով Ներսէւը խմբագրում է յոյներին ուղղուած դաւանական մի բուդք (14)։ Այդտեղ նա խօսում է Բանն Աստուածոյ Մարդկութեան մասին, իրեւ «միացում» երկու բնութիւնների. սոյնը ներկայացնում է նա այնպիսի ձեւով, որ յոյների համար յստակ է դառնում, թէ հայերն յաւելում կա փոփոխում չեն մտցնում Քրիստոսի Աստուածութեան եւ մարդկութեան մէ։ Նա Ցիսու Քրիստոսին դաւանում է իրեւ մէկ Անձ՝ աստուածային եւ մարդկային բնութիւններով, եւ սոյնը բացատրում է նա այնպիսի խօսերով, որոնք յոյներին ցոյց են տալիս, թէ նրանց դաւանանքը չի տարբերում հայկական աւանդութիւններ։ Ներսէւն հաստատում է.

«Եթէ մի բնութիւնն վասն անքակտիի եւ անքածանելի միաւորութեանն ասի եւ ոչ վասն շփոթման, եւ երկու բնութիւնն վասն անշփոր եւ անայլային լինելոյ եւ ոչ վասն բաժանման, երկանանչիւթն ի սահմանի են ուղղափառութեան» (15)։

Նկատի ունենալով այն աւանդութիւնները ու ծիսական սովորութիւնները, որոնք տարբերում են յունականից, դաւանական թղթի վերջաւորութեան ներսէս խաղաղափառական ոգով յոյներին բացատրում է, թէ դրանք Հայ եկեղեցում ինչպէս են ըմբռնում, եւ ամենայն համբերութեամբ ուղղում՝ գոյութիւն ունեցող բոլոր թիւրիմացութիւնները:

Այս բացատրութիւնը Կոստանդնուպոլսում թողնում է մեծ տպաւորութիւն: Մանուկ Կայսրը, որի մօտ միութենական քանակութիւնների էին եկել Ալեքսանդր Գ. պապի ուղարկած ներկայացուցիչները (16), 1167ին պատգամաւորներ է առաքում Հռոմեական, խնդրելով Գրիգոր Գ. Կաքողիկոսին, որ Ներսէսը կայսրութեան մայրաքաղաք գայ մասնակցելու համար միութենական քանակութիւնների: Այդ ընթացքում արդեն Գրիգոր Կաքողիկոսը վախճանուել էր, եւ նրան յաջորդել էր Ներսէսը: Նորընտիր Կաքողիկոսը Մանուկ Կայսեր առաքած մի թղթով (17) առաջարկում է, որ հայերի եւ յոյների միջև միութենական քանակութիւնները տեղի ունենան Հռոմեականում: Սոյն գրութեամբ Ներսէսը ողջունում է կայսեր, պատրաստ գտնուելու եւ գործակցելու համար կմանուէլի հետ.

«Քանզի ծանոյց մեզ զօրութիւն բանիս ոչ միայն անուանակցութեան եւ արռոակալութեան, այլ եւ գործակցութեան նշանակութեան էմանուէլի արժանաւորի ձեզ, այն որ հարիւրոցն ոչխարաց եւ դրամիցն տասանց էջ ի խնդիր նուազութեանցն լրման եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց, եւ արար զերկուսանն մի արեամբ խաչին իւրոյ, ըստ այսմ եւ դուք հանդերձալ էք զանուանակցութիւնդ եւ զարուակալութիւնդ ոչ միայն օրինական կոչել, այլ եւ արդեամբք եւ նշանակութեամբ» (18):

Երկու աւանդութիւններն ել ծառայում են միեւնոյն նպատակի՝ հասնելու եկեղեցու միութեան, նոր Սիոնի որդիների եւ դուստրերի խաղաղութեան, ինչպէս նաև Սուրբ Երրորդութեան միաձայն փառաւորութեան, որը կարող է իրականանալ ոչ թէ կայսերական ոյժի պարտադրումով, այլ միայն Քրիստոսի սիրով: Քանի որ աւելի քան 700 տարուայ բաժանման ընթացքում կուտակուած կրքերը կարելի է մեղմացնել միայն մեծ համբերութեամբ: Երբեւ փաստացի ապացոյց բարի ցանկութեան նախ բող կայսրը հայերին խաղաղութիւն պարգևել կայսրութեան սահմաններում, ու հրամայի յոյն եկեղեցականութեանն ու ժողովրդին, որ վերջ գտնեն հայերի դէմ մղուած դաւանական մոլեռանդութիւններն ու բռնութիւնները. այլադաւան (ոչ օրոքունքները), որոնք արդէն իսկ հայածում են ոչ քրիստոնեաններից, գոնեք քիզանդական կայսրութեան մէջ պէտք չէ ենթարկուեն աւելորդ նեղութեանց, այն էլ ուղղակի յոյներից: Արեւելքիններին հնարաւոր է միութեան համար այն ժամանակ սիրաշահել, երբ յոյների կողմից վերջ գտնի արեւելեան եկեղեցինների, խորանների, խաչերի ու եկեղեցականների դէմ կատարուած մոլեգին ունագութիւնները (19): Ոչ թէ ոյժը, այլ սէրն ու համակրանքն են մարդկանց իրար մօտեցնում:

Սակայն աւելի կարեւորն այն է, որ կայսրը պարտի հրամայել եկեղեցիններին աղօթելու առ Աստուած, որպէս զի Աստուծոյ օգնութեամբ միութեան գործը յաջողութեամբ պատկուի: Խնքը, Ներսէսը, անձնապէս հրահանգել է երկրի բոլոր հայ եկեղեցիններին առ Աստուած աղօթելու, որպէս զի Աստուած իրար հետ միացնի: Նոր Սիոնի որդիներին ու դստրերին: Կայսրը եկեղեցու միութեան նկատմամբ

իր ցուցաբերած հետաքրքրութեան համար պարտական է Աստուծոյ ողորմածութեանը: Եթէ պատահի, որ երեւան գայ մի մարդարէ, նա Աստուծոյ անունով պիտի յայտարարի, թէ Քրիստոնեաները, որոնք իրենց Փրկչից կորուստից փրկուելով առաջնորդուել են դեպի միութեան, այժմ, Աստուծոյ քարկութեամբ են իրար մօտենալու, քանի որ նրանք փոխանակ իրար սիրելու, իրարից քաժանում են: Նրանք մատնուած են Քրիստոսի քշնամիների սրին, մինչեւ որ նորից վերադառնան քրիստոսաւանդ սիրոյ պատուիրանին եւ կարողիկ ու առաքելական մէկ եկեղեցուն:

Ներսէսը տեղեկացել է այն մասին, որ Հռոմի պատգամաւորները միութենական քանակցութիւններ են վարում կայսերական եկեղեցու հետ, եւ նա կայսեր կարող է հաւասսիացնել, որ հայերն էլ իրենց հերքին Հռոմկայում եկեղեցական քանակցութիւններ են վարում ասորիների նորընտիր պատրիարքի (20) հետ: Պարզապէս նա ցանկանում է կայսեր դիմել հետեւեալ խնդրանեով.

«Այլ եւ զայս եւս հայցեմք ի ներող քաղցրութենէ ձերմէ, զի թէ տնօրինեսց Աստուծ խօսել մեզ առ միմեանս, մի՛ եղիցի որպէս տեանս առ ծառայս եւ ծառայից առ տեարս. զի դուք զմերն պակասութիւն դնեք մեր առաջի, եւ մեք ոչ համարձակիմք ի ձերոց ինչ՝ յորոց գայրակղիմք, ծանուցանել ձեզ. եւ այս մարմնաւորաց է օրէն եւ ոչ հոգեւորաց, զի թէպէտ եւ ի նիւթականացս զբարձրագոյնն ունիք ամենայնիւ, եւ յիմաստութիւն առաւելեալ քան զբնաւս, այլ աննիւթական շնորհաւն մի են հաւատացեալք ի Քրիստոս՝ մեծամեծ եւ փոքրնեք, ըստ Պատրոսի» (21):

Եթէ Աստուծոյ ողորմածութիւնը բոյլ տայ արտայայտուելու, ուստի՝ Քրիստոս է հիմքը այս միութեան, իսկ առաքեալները,

մարդարէներն ու եկեղեցու հայրերի գրութիւնները՝ դատաւորներ.

«Եւ քննութիւն ոչ հակառակութեամբ եւ անօգուտ բանակոռուութեամբ՝ որպէս մինչեւ ցայժմ, յորոց ոչինչ օգտեցաւ եկեղեցի այսքան ժամանակ, այլ մանաւանդ վճասեցաւ իսկ, այլ եկեղեցի հեղութեամբ եւ հանդարտութեամբ, եւ զրեն իրերաց քանալով եւ զտկարութիւն տկարաց թժկելով՝ ըստ հրամանի Առաքելոյն, զի որ յաղագս հակառակին յաղթելոյ խօսեցի զրանն, որպէս զի փառս որսացէ ի մարդկանէ իրբեւ զյադբող, վաճառական է այնպիսի քանին Աստուծոյ՝ եւ ոչ սպասաւոր, եւ հարկանող վիրաւորեալ անդամոցն Քրիստոսի՝ եւ ոչ պատող» (22):

Այնտեղ որտեղ պակասներ կան, պէտք է լրացուեն ապահինող միջոցների փոխադարձ մատակարարմամբ, բայց միաժամանակ պէտք է այն մասին իմանան, որ դեղն երբեմն լեղի է լինում: Նաև այն դեպքում, մատուցուած դեղը պէտք չէ մերժուի, երբ տուեալ մատուցողը մեղաւոր է, որովհետեւ յանախ հզօրներն ել կարիք ունեն բոյլերի:

Նամակին կցուած դաւանութեան բղբում (23) Ներսէսը զարգացնում է նորից այն տեսակետը, որ յոյների եւ հայերի Քրիստոսարանութիւնը իրար հետ համատեղելի է, եւ միութեան իրականացումը հնարաւոր՝ «միութեան մէջ քազմազանութիւն» սկզբունքով: Միութիւնը վերաբերում է դաւանանքին, բայց ոչ ծիսական եւ աւանդական արտաքին ձեւերին: Խրաքանչիւր նուիրագործուած սովորութիւն պէտք է եկեղեցում ունենայ իր ուրոյն տեղը: Պատարագի նշանակների առնչութեամբ, նա սուրբ գրական ապացոյների հիման վրայ պաշտպանում է անխմոր հացի եւ անապակ քաժակի սովորութիւնը, աւելացնելով ծեսի համար

անհրաժեշտ հետեւեալ սկզբունքը. «Հաստատեալ գիտեմք, եթէ ոչ այլ ինչ է հանոյ Աստուծոյ, բայց ուղղափառ հաւատքն եւ մատուր վարքն: Այլ եթէ պարզ մոտք եւ ոչ հերձուածողական ինչ կարծեօք կատարին այստիկի, աւանդութիւնք են ազգաց եւ ոչ առաւելութիւն կամ նուազութիւն ինչ ի հաւատս: Վասն որոյ յորժամ գլուխն՝ որ է հաւատն, միանայ եւ յօդի ի գլուխն Քրիստոս, յայնժամ եւ անդամքն՝ որ են աւանդութիւնքն, ուղղին եւ կամ հանոյանան միմեանց ի փառս Քրիստոսի Աստուծոյ» (24):

Մանուկ կայսրը ընդունում է Ներսէսի հրաւերը: Նրա հրահանգով երկու անգամ Հռոմէլիա է գալիս Թէորիանոս անունով մի գիտնական, մասնակցելու համար միութենական քանակցութիւններին: Beckը նրան գնահատում է իր բեւ «Պատանարանանութեան եւ քանավենի մեջ խաղաղասիրութեան ոգի պահող այնպիսի մի անձնաւորութեան, որի նմանը սակաւ չէր ժԲ. դարում» (25): Սակայն ասորական աղքիւններից տեղեկանում ենք, որ նա ազատ չէր արեւելքցինների նկատմամբ թիգանդացոց իւրայատուկ մեծամուրիւնից (26):

Թէորիանոսի առաջին կեցութեան ընթացքում (1169/70) կատարում են խորհրդակցութիւններ դաւանանքի մասին եւ արծարծում վարդապետական հարցեր, որոնք Ներսէսը ամփոփում է կայսեր ուղղուած մի բղբում (27): Արդեօք պիտի ընդունուէ՞ր ծիսական հարցերում այն պատութիւնը, որ պահանջում էր Ներսէսը:

Կարողիկոսն իր նամակում կայսեր պարզում է, որ նա առաջի հերթին Կիլիկիոյ եկեղեցու անունից է խօսում: Միութեան մասին վերջնական որոշում տալու համար պէտք է համահայկական մի ժողով գումարուի, որովհետեւ հայ ժողովրդի նակատագրի ծանր բերումով՝ «Հայրապետութեան հայածեալ ի

հայրենին աշխարհէ եւ Աքոռոյ՝ յօտար աշխարհ տարաբերի պանդիստութեամբ, յորոց պատճառէ ոչ ունիմք մերձ զորս ըստ ժամանակիս եպիսկոպոսունք են Հայաստանեաց եւ վարդապետէ, եւ առանց խորհրդակցութեան նոցա՝ անմարք է զկատարեալն տալ պատասխանի հարցմանց ձերոց, զի մի՛ փոխանակ միաբանութեան զանազան պատճառս տացուք բաժանմանց» (28):

Խոկ համահայկական այս ժողովը նա ցանկանում է այն ժամանակ հրաւիրել, երբ առաջին քանակցութիւնների արդիւնքը Կոստանդնուպոլիսից հասնի Հռոմէլա: Սակայն մինչեւ Թէորիանոսի վերադարձը անցնում է երկու տարի: Պատերազմը պատճառ է լինում ուշացման (29), իսկ Միհայէլ Գ. պատրիարքն էլ, երբ Թէորիանոսը դեռ գտնում էր Հռոմէլայում, դարձել էր բուռն հակառակորդ լատինների եւ հայերի հետ մերձեցման (30), միւս կողմից՝ հայերի մօտ սկսուել էին Ներսէսի դէմ բաղկեդնական քանածեւի պատճառով կասկածներ յարուցուել իրեւ դաւանանի: Նրբ քանակցութիւնների երկրորդ շրջանն սկսում է (որի զարգացման նշգրիտ ընթացքը դժուար է վերարտադրել յունական, հայկական եւ ասորական աղքիւններում գոյութիւն ունեցող մեծ հակասութիւնների պատճառով), յոյներն ներկայանում են միութենական այնպիսի պայմաններով, որոնք բոլորովին հեռու էին՝ « միութիւն քազմազանութեան մեջ» սկզբունքից: Միութեան հեռանկարով Ներսէսի սահմանած վարդապետական քանածեւը յոյների կողմից անբաւարար նկատուելով մերժում էր: Նրանք հայերից պահանջում էին ընդունելու վարդապետական այնպիսի բացարութիւններ, որոնց սովոր էին յոյները՝ ընդունել Քաղկեդոնն, ինչպէս նաև դրան յաջորդող ժողովները, կայսրին է վերապահում Հայոց կարողիկոսի

նշանակումը, եւ ամենից վատը՝ ստիպումէ կիրառելու բիւզանդական եկեղեցու ծիսական սովորութիւնները իբրև գին այս միութեան (31): Որպէս զի քանակցութիւններն չընդհատուեն, ներսէար մի կերպ համաձայնում է առաջարկուած պայմանների հետ, սակայն ոչ շատ անց՝ վախճանենում է:

Նրան յաջորդած Գրիգոր Դ.ը քանակցութիւնները հասցնում է այնտեղ, որ յոյնները զիջում են հայերի նկատմամբ ծիսական նոյնութեան պարտադրանքը, եւ նա 1179ին կարողանում է Հռոմեայում գումարել միութենական մի ժողով: Բայց երբ հայ պատգամատրները մայրաքաղաք են հասնում կայսեր տեղեկացնելու ժողովի արդիւնքները, Մանուկը մահացել էր: Նրա մահով վերջ է գտնում Կոմենցերի վերազարթօնքի շրջանը: Գահակալական ներքին կոհիները, պատերազմներն ու ոչ երկրացիների նկատմամբ բիւզանդացիների կոյր ատելութիւնը՝ հայերին նոր ողբերգութիւնների է առաջնորդում: Բիւզանդիան այլևս զրադում էր ներքին հարցերով, եւ ընդհանրապէս ժամանակ չէր մնում հետաքրքրություն միութենական քանակցութիւնների արդիւնքներով:

Նմանապէս արեւելան Հայաստանի եկեղեցականութիւնը ոգեւորուած չէր միութեամբ: Այդտեղ խօսք են վերցնում քարձրաստիճան եկեղեցականներ, որոնք ընդհանրապէս հեռու էին մնացել միութենական քանակցութիւններից: Նրանք աւելի հակուած էին պահպանելու հայկական աւանդական կեցուածքը, քան քաժաններու ներսէա կաքողիկոսի միութենական գաղափարները, եւ որովհետեւ նրանք ապրում էին մահմետական տիրապետութեան տակ, նաեւ չէին ողունում արեւմուտքի հետ քաղաքական մերձեցումը: Ազգային-եկեղեցական ժողով գումարելով նրանք Հայրապետական Աբովը տեղափոխում են էջմիածին:

Ներսէսի քաժանման վերաբերեալ վախճանականում է, չնայած, որ յոյնների հետ կայացած եկեղեցական միութեան որոշումը բոլորովին չէր գործադրուել:

Ներսէս Շնորհալին եւ Միքայէլ Ասորին փորձում են նաեւ խաղաղութիւն հաստատել հայերի եւ ասորինների միջև: Երկու այցելութիւնների առիթով կ Թէորիանոսը Հռոմեայում նաեւ հանդիպաւ է ունենում ասորի պատգամատրների հետ, սակայն քանակցութիւններն մնում են ապարդիւն: Այն մօտեցումը, որ ներսէսին յաջողուել էր ատեղծելու ասորինների հետ, Գրիգոր Դ.ի ժամանակ կորսում է: Հայերը քաղաքական որոշակի ազգեցութիւն ունեին ասորինների վրայ, որովհետեւ բռուվ ոչ սակաւ ասորիններ ապրում էին ուղղակի Կիլիկիայում: Հայերը միշամտում են ասորինների եկեղեցական ներքին հարցերին եւ օժանդակում Միքայէլ պատրիարքի հակառակորդին, որովհետեւ նա հայերին աւելի էր ներարկուում քան Միքայէլը: Այսպիսով, նրանք ունակոյն են անում ծլարձակող վստահութեան այն սաղմը, որն անում էր այս երկու հնաւորց ժողովուրդների միջև:

Յոյններից լքուած, ասորինների հետ նորից խոռված, նոյնիսկ բուն Հայրենիքում ապրող հայերից քաժանուած, եւ շրջապատուած՝ թշնամի ազգերով, Կիլիկիան այլևս չէր կարող իր սեփական ուժերով գոյատեւել: Մարոնիտների նման, Ժ. դարի վերջում Կիլիկիոյ Հայ Նվերեցին եւս միանում է լատինների հետ: Սակայն վերջիններիս համար Ժ. դարի վերջում միութիւն քազմազանութեան մեջ եւ հաւասարութիւն մեծի եւ փոքրի միջև, ինչպէս ներսէս էր պահանջել, աներեւեակայելի մի իրականութիւն էր:

Երբ 1204 թուականին խաչակիրներն Կոստանդնուպոլիսը բիւրտ կերպով կործանում են, հաշտութեան ոգին բոլորովին

իերղյում է: Այդ դեպքից ժիշ անց, երբ Խնովկենդիոս Գ. պապը Կոստանդնուպոլիսյան լատին կայսեր գրում է «*Translato imperio, necessarium ut ritus sacerdotii transferatur*», սկզբ է առնում մի ժամանակաշրջան, որի ընթացքում լատիններն ձգուում են բոլոր միջոցներով լատինականացնել արևելյան եկեղեցիները: Այն, որ մենք «Ժ. դարի միութենական շարժում» ենք անուանում, 1204 բուրականը վերապրել չիարողացաւ:*

* Յօդուածիս հեղինակը Ռւսուցչապետն է Վիեննայի Պա. Համայսարանի Արեւելեան Եկեղեցագիտութեան և Հայուարանական Ամպիոնի: Յօդուածը գիրմաներին բնագրից բարգմանեց՝ Արքէ արեղայ: 1. Հմմտ. G. Ostrogorsky, Geschichte Des Byzantinischen Staates, München, 1963, s. 293-325. 2. Հմմտ. Erwand Ter-Minassiantz, Die armenische Kirche in ihren Beziehungen zu den szrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts, Leipzig, 1904.

3. Հմմտ. W. De Vries, Rom und die Patriarchate des Ostens, Freiburg, 1963, S. 25. Կղեմսն Գ. ի հակառակութեան պատճառով, Ռւրաբնու պապը ի վիճակի չը ցնուածելու Ալեքսիոս Ա. կայսեր հրաւերը: 4. Անտիոքը Խաչակիրների կողմից գրաւուելուց յառաջ, Ամսինքի Յովկաննեա Օքսայուտ պատրիարքը, որին որոշ ժամանակ ենթարկուում էին տեղի լատին Եկեղեցականները, հակադրուելով իշխանին, սովորած է լինում փախչելու, հրաժարում է Արքունիք և մեկուսանում մի վանքում: Այն, որ յան աստուածաքանները ինչպիսի մեծ նշանակութիւն էին տալիս խմորեալ հացի խնդրին, կարեի է եղբակացնել նրա բողած գրութիւններից: Այս մասին Կիրա և Theologische Literatur im Byzantinischen Reich (München 1959, S. 613) խորագիրը կրող գործում, Hans-Georg Beckը գրում է. «Ըստը 1112ին, երբ լատինների դեմ հակառակութիւնն նորից է բռրնցում, առ մամակի մեռով խմորեալ հացի վերաբրեալ գրում է մի պշատութիւն: Նա այս հարցում տեսնում է լատինների դեմ եղած հակառակութեան ամենակարենը կետը: Beckը այսպէս է գնահատում իրան «Բիւզանդական պատրիարքների պատմութեան

մէջ Յովկաննեան, ըստ երեւյրին, ամենաազնի դեմքերից մէկն է»: Panoparia-ում, որը Ալեքսիոս կայսեր պատուերով խմրագրել է Euthymios Zigabenosը, ԻԳ. գլխում (ընդդէմ Հայոց: PG 130, 1173-1190) ընդարձակ տեղ է տրամադրում սյն հարցերին: հենց այս գլուխը, ըստ Պէգի (տես նոյնը, 614), խմրագրել է Zigabenosի կողմից: 5. Հմմտ. Ostrogorsky, անդ, 318.

6. Առանց Ակատի առնելու հայկական և ասորական աղքիւթերը և հիմք ունենալով միայն յունական տուեանները, Մատուել կայսեր միութենական ծրագրերի մասին են խօսում. Hefele-Leclerc, Histoire des conciles, V, 1050-1052; Ամանակս՝ Chrysostomos Papadopoulos, Alexandrien 1951, S. 938-941.

7. Ostrogorsky, անդ, 314.

8. H. G. Beck անդ 622.

9. Հմմտ. B. Spuler, Die morgenländischen Kirchen, Leiden 1964, S. 217 ff; P. DIB, Histoire de l'Eglise Maronite, Beirut 1962.

10. Հմմտ. B. Spuler, անդ, 203; P. Kawerau, Die jakobitische Kirche im Zeitalter der Syrischen Renaissance, Berlin 1955, S. 73f.

11. Հմմտ. Mansi XXI, 583; Concilium Hierosolymitanum . . . circa annum MCXLIII.

12. Տես J. Cappelletti, Sancti Nersetis Clajensis, Armeniorum Catholici opera, 2 հան., Venedig 1833.

13. Cappelletti, անդ, II, 92-172.

14. Անդ, 173-194.

15. Հմմտ. Ընդհանրական բուլը՝ սրբոյն Ներսէս Շնորհալոյ, Երուսաղէմ, 1871, էջ 97; Cappelletti, 183. Ասուուածարանական առաջին ոչ պաշտօնական բանակցութիւնների առիրով, որը տեղի ունեցաւ օրբուունք և ոչ Քաղկեդոնական Եկեղեցիների միջև Արքուն Քաղաքում (1964), Հայոց Անդակայացուցիչ՝ Գարեգին նպա. Սարգիսիանը իր բանախօսութիւնը աւարտեց վերոյիշեալ մէջբրումով և աւելացրեց. «Եթէ այս հաստատումը հնարաւոր էր Ժ. դարում, դրանից ինչպիսի եղրակացութիւն կարող ենք մենք անդին: Ասուուածարանական այս ժողովը, ինչպէս Ներսէս Շնորհալին, եկաւ հետեւալ եղրակացութեան. «On the essence of the Christological dogma we found ourselves in full agreement» (Հմմտ. ժողովի փաստաբերը, The Greek Orthodox Theological Review 10, 1964/1965, 14 և 19).

16. P. Tekeyan, Controverses christologiques en Arme'no-Cilice, Rom 1939, S. 9f և 18.

17. J. Cappelletti, անդ, 195-204.

18. Հմմտ. Շնորհալին, Անդականի, 300; Cappelletti, անդ, 195. Ներսէս Շնորհալին Եկեղեցու միութեան

զաղափարը վերցնում է Եփես Բ 14-16 համարներից եւ ոչ ինչպէս մենք՝ Յովի ժէ 20էն, որտեղ խօսքը առանձին-առանձին աշակերտների մասին է: Սոյնը մտանանշում է նաև այն, որ Ներսէսի համար միուրիւնը ոչ միայն եկեղեցական մի միուրիւն է, այլ նաև հայ ժողովրդի միուրիւնը բնագանդացիների հետ, որովհետեւ Արեւելքում եկեղեցի եւ ժողովուրդ հասկացուրիւնները մէկ են:

19. P. Tekeyan, ամէ, էջ 19, ապացուցում է պատմական աղբիւներով:

20. Միքայէլ Աստրի, համբածօք աստուածարան եւ պատմարան, գահակալութիւն 1166-1199. Նրա մասին տե՛ս DThC X, 1711-1219.

21. Ընդհանրական բուլլք, 117-118; Cappelletti, ամէ, 202f. Կարողիկէ եւ Օրրոտոն եկեղեցիների բանակցուրիւնների առիրով, Ռողոսում կայացած Համարքոտոնի Բ. ժողովի որոշումը առաջարկում է «միեւնոյն պայմանները», ի գիրս՝ Her der korespondenz 18 (1964) 338:

22. Ընդհանրական բուլլք, 118; Cappelletti, ամէ, 203. այս մասին տե՛ս Յովիաննես ԻԳ. պապի խօսքները, Վատիկանի Բ. ժողովի բացման առիրով. «Վատիկաննեան երկրորդ ժողովի սկզբում աւելի քանի երբեք յստակ է, որ Տիրոջ ճշմարտութիւնը յաւիտնական է: Մենք նկատում ենք, թէ ինչպէս

ժամանակի ընթացքում մարդկանց անորոշ կարծիքները իրար են յաջորդում, եւ Յրամց սիսակները կուտակում են ինչպէս մառախուղն արշալոյսի, բայց այն շուտով անհետանում է, երբ արեգակն է ծագում: Եկեղեցին բոլոր ժամանակների ընթացքում դիմադրել է այդ սիսակներին, դատապարտել է դրանք, նոյնիսկ երբեն ամենախիստ ձեւով: Բայց այսօր Քրիստոնի հարակամբն է իրեւ դարման՝ ողորմածութեան ոգին, քանի միջոցները կիրառել: Նա հաւատում է, որ ժամանակի հրամայական պահանջից մղուած հարկ է մարդկանց եկեղեցու վարդապետութեան ոյժին ընդարձակ բացատրութիւններով հաղորդակից դարձնել՝ քանի դատապարտել (Her der korespondenz 17 {1962/63} 87).

23. Cappelletti, ամէ, 202-230.

24. Ընդհանրական բուլլք, 132-133; Cappelletti, ամէ, 218f.

25. H.-G. Beck, ամէ, 628.

26. Հմտա. Ter-Minassiantz, ամէ, 125-128; P. Tekeyan, ամէ, 30f.

27. Cappelletti, ամէ, 231-238.

28. Ընդհանրական բուլլք, 147; Cappelletti, 232f.

29. Tekeyan, ամէ, 26f.

30. Տե՛ս H.-G. Beck, ամէ, 627.

31. Տե՛ս P. Tekeyan, ամէ, 29.

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՄԵՍՐՈՊ ՎՐՈՒ. ՆՇԱՆԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ 1917 ՅՈՒՆՈՒԱՐ 1Է

Դեկտ. 13 Դշ.՝ Քանի օրերէ ի վեր շարունակուող սաստիկ քամին ու տեղատարափ անձրեւները արգելք եղած կը բուի ո զինուորական գործողութեանց. այսօր երբ օդը քիչ մը պարզուեցաւ, թնդանօրի ձայներ լսեցինք: Ծննդեան առքի շնորհաւորական այցելութիւնները տուինք լատինաց պատրիարքարանը, Ֆրանչիսկաններու. յոյն եւ գերման կարողիներու վանեքը:

Դեկտ. 14 Եշ.՝ Գիշերուան ժամը 5էն մինչեւ յաջորդ կէս գիշերը արեւելակողմէն անընդհատ թնդանօրա- ճգութիւն, միքրայէօգի ու հրացանի գոր-

ծողութիւնները: Լսցինք թէ բուրքները 11,000 ուժով յառաջացեր ու չըս անզամ յարակում գործեր են, բայց ամէն անզամ եւ մղուեր են մեծ կորուսաներով: Մոտ 599 գերի բերուեր են, ուրը բնդանօր գրաւուեր է ու մեծ թիւով մեռեալներ կան, կ'ըսուի:

Դեկտ. 15 Ուր.՝ Մինչեւ երեկոյ թնդանօրի ու միքրայէօգի ձայները տեսեցին արեւելեան կողմէն:

Դեկտ. 16 Ծր.՝ Թնդանօրի ձայները հեռուներէն կը լսուին, որով յայտնի եք թէ բուրքները եւ մղուած էին արեւելեան ու հիւսիսային կողմէն: Ռամալլան երեւ-